Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 54 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԳՅՈՒՂԵՐԻ ՉՄՇԱԿՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱԳՐՈԱՆՏԱՌՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզերի բնակավայրերի չմշակվող համայնքապատկան հողատարածքներում ագրոանտառների հիմնում՝ գյուղական բնակչության եկամուտների կայուն ավելացման նպատակով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	1) «ՇԷՆ-Ֆրանսիա» բարեգործական կազմակերպություն, հասցե՝ 24 բյու դը Մոբյուժ, 75009, Փարիզ, Ֆրանսիա 2) Ը Թրի Ֆոր Յու Ասոցիացիա, հասցե՝ Պենիշ Ինդիա Տանգո 1, պող դե Շոմփս Էլիզե, 75008, Փարիզ, Ֆրանսիա 3) Հաց աշխարհին - Գերմանիայի Եկեղեցիների Ընկերակցություն, հասցե՝ Կարոլին Միշլեզ փողոց 1, 10115, Բեռլին, Գերմանիա
4.	Ծրագիրը կատարողը	«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Նալբանդյան 110, ՀՎՀՀ՝ 01503283)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզերի բնակավայրեր, բնագավառը՝ բնապահպանական
6.	Ծրագրի բյուջեն	180,000,000 դրամ

7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրի շահառուներն են Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, մարզերի համայնքները: Բնակավայրերը, որտեղ կիրագործվեն ագրոանտառների հիմնման ծրագրեր, կընտրվեն «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության ուսումնասիրությունների միջոցով:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի փետրվարի 1-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	10 հա մակերեսով ագրոանտառների հիմնում 5 գյուղերի տարածքում յուրաքանչյուրը 36,000,000 դրամ, ընդամենը՝ 180,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի փետրվարի 1-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) տնկիների, բուժանյութերի, պարարտանյութերի, տրակտորների և դրանց կցորդիչների, մոտոբլոկների և դրանց կցորդիչների, քարշակների, գյուղատնտեսական գործիքների, ոռոգման նպատակով պոլիէթիլենային և մետաղական խողովակների, կցամասերի, փականների, միացումների, բաժանարարների, կաթոցիկների, ցանկապատի կառուցման մետաղական խողովակների, մետաղական ցանցերի, ամրանների, եռակցման պարագաների ձեռքբերում կամ ներմուծում՝ 152,000,000 դրամ արժողությամբ: 2) ոռոգման խողովակաշարերի կառուցման և նորոգման շինմոնտաժային աշխատանքների իրականացում 28,000,000 դրամ արժողությամբ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցությունը նախատեսված է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության, ինչպես նաև նշված մարզերի տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Համաձայն պայմանագրերում նշված ժամկետների՝ շնորհատու կազմակերպությունները կիրականացնեն ծրագրերի անկախ վերահսկում: Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

30.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ